# 2022 ԹՎԱԿԱՆԻՆ.




*«Սափարի» իրավաբանները իրականացրել են 1572 իրավաբանական խորհրդատվություններ, իսկ սոցիալական աշխատողները՝ 841 խորհրդատվություն,*

*Արտադրության մեջ ստացել ենք 473 գործ: 2022 թվականին ավարտված 176 գործից՝ 146-ն ավարտվել է մեր ուզած արդյունքով,*

*Անցկացրել ենք 28 թրեյնինգ, վերապատրաստել ենք ավելի քան 300 մասնագետների, տեղեկատվությունը տարածելու նպատակով՝ հանդիպել ենք մոտ 150 ծնողի,*

*Իրականացրել ենք 8 տեղեկատվական քարոզարշավ,*

*Անցկացրել ենք 4 հետազոտություն,*

*Պատրաստել ենք 6 զեկույց և հրապարակում:*



## «ՍԱՓԱՐԻ» ՄԱՍԻՆ ԱՎԵԼԻՆ ԻՄԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՅՑԵԼԵՔ՝

https://sapari.ge/

@unionsapari

@union.sapari

@UnionSapari

union.sapari

Union Sapari

**ԿԱՊՆՎԵ՛Ք.**

info@sapari.ge

+995 322 307 603;
+995 99 407 603

**ՀԱՍՑԵ**

*Թբիլիսի,*
*Ակակի Գախոկիձե 11Ա*

WISE

საფარი SAPARI

**«Սափարին» ֆեմինիստական հասարակական կազմակերպություն է, որն ավելի քան 20 տարի պայքարում է կանանց հզորացման համար՝ Վրաստանում:**

***Մենք ունենք գենդերային զգայուն իրավաբանների խումբ՝ տարիների փորձով, որոնք ամբողջ երկրում բռնության զոհ դարձած կանանց և երեխաներին առաջարկում են անվճար իրավաբանական ծառայություններ: Մենք գործեր ենք վարում և՛ երկրի ներսում, և՛ միջազգային դատարաններում:***

WISE

საფარი SAPARI

2022 թվականին մենք կրկին ակտիվորեն աշխատել ենք՝ կանանց նկատմամբ բռնության, սեռական հանցագործությունների, տնտեսական բռնության, գիշերօթիկ դպրոցներում ապրող դեռահասների, կիբերանվտանգության, իրավապաշտպանների գործունեության հետ կապված խնդիրների վերաբերյալ, ներգրավված էինք քաղաքականության շահերի պաշտպանության մեջ:

Հասարակությանը իրազեկելու և գենդերային զգայունությունը բարձրացնելու նպատակով՝ մենք մշտապես պլանավորում և իրականացնում ենք տեղեկատվական քարոզարշավներ և աշխատում ոչ ֆորմալ կրթության ուղղությամբ:
Մեր առցանց հարթակներն են.

«Փանջարա»՝ երկլեզու, ադրբեջանա-վրացալեզու հարթակը՝ էթնիկ ադրբեջանցի երիտասարդների ինտեգրումը հեշտացնելու համար,

«Գանձ»՝ երկլեզու, հայա-վրացալեզու հարթակը՝ էթնիկ հայ երիտասարդների ինտեգրումը հեշտացնելու համար,

«Աղջիկների ձայնը»՝ 13-ից 25 տարեկան աղջիկների խումբը աջակցում է «Սափարին» ամբողջ Վրաստանից: Մենք ապահովում ենք, որ մեր երկրում կանանց ապագա սերունդը զարգանա գենդերային ճնշումներից զերծ միջավայրում:






Համաճարակի ժամանակ մենք ներկայացրել ենք կանանց անվտանգության համար բջջային հավելված՝ Safe You, որն ունի ավելի քան 22 500 օգտատեր: Այսօր հավելվածը հասանելի է վրացերեն, ուկրաիներեն և հայերեն լեզուներով, և շուտով երկրի ադրբեջանալեզու բնակչությունը ևս կկարողանա օգտվել հավելվածից:



Safe You հավելվածից օգտվելիս՝ սեղմելով SOS կոճակը, տագնապի ահազանգ է ուղարկվում մեր ընտրած մտերիմին, կանանց կազմակերպություններին և/կամ ոստիկանությանը (միայն այն դեպքում, եթե նշեք՝ոստիկանությունը): Հավելվածի այս գործառույթը հատկապես անհրաժեշտ է, այն ժամանակ, երբ պատահաբար մեզ հետ բռնություն է տեղի ունենում կամ ականատես ենք լինում նման դեպքի, և օգնություն կանչելու անհրաժեշտության առաջ ենք կանգնում:




Նաև, հավելվածը ունի անանուն ֆորումի տարածք, որտեղ օգտատերը կարող է ստանալ մասնագետներից ցանկացած հարցի պատասխան կամ խորհուրդներ (իրավաբան, հոգեբան, վերարտադրողական բժշկության մասնագետ, սոցիալական աշխատող), և այս ամենը լրիվ անանուն է:




Նաև 2022 թվականին կազմակերպության կայքում ստեղծեցինք նվիրատվության հարթակ, որի միջոցով ցանկանում ենք նպաստել Վրաստանում բարեգործության մշակույթի զարգացմանը:

